№ 166 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՕՈՒԼԻՍԻ 31 1901 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՕՈՒԼԻՍԻ 31 № 166

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվան 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկ.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԴՐԵԴՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
Մի նոր կարգադրութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայոց Թատրոնի մասին. Նամակ Երեւանի գաւառից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Թռուցիկ տպաւորութիւններ։

ՄԻ ՆՈՐ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ

Նոր կարգադրութեամբ մեծ դիւրութիւններ են տրված բժշկական և առողջապահական ժողովներ կազմելու համար նահանգներում։ Իւրաքանչիւր տարի ամեն մի նահանգում, առանց մինիստրութեան թոյլտուութեան, այլ միայն նահանգապետի գիտութեամբ կարելի է հրաւիրել ժողովներ՝ խորհրդակցելու տեղական բժշկական և առողջապահական կարիքների մասին։ Այդ ժողովներին մասնակցելու կարող են հրաւիրվել բացի նահանգական ծառայութեան մէջ գտնվող և զեմստվոյում ծառայող բժիշկներից նաև նահանգի սահմաններում գործող միւս բժիշկները։

Մինչև այժմ ժողով կազմելը մեծ դժուարութիւնների էր հանդիպում և այդ պատճառով տեղական վարչութիւնները չէին վստահանում միջնորդել այդպիսի ժողովներ կազմելու մասին։ Երբ որ տեղական հանգամանքները անհրաժեշտ էին կացուցանում խորհրդակցութիւններ կազմելը՝ նահանգական վարչութիւնը աշխատում էր խուսափել ժողովներից և մշակում էր հանդէս եկած խնդիրները մասնաւոր յանձնաժողովների միջոցով։ Այն դէպքերում, երբ նահանգական վարչութիւնը դիմում էր մինիստրութեան՝ խնդրելով թոյլատրել բժիշկների ժողով, առհասարակ թոյլտուութիւնը այնքան ուշ էր գալիս, որ շատ անգամ ժողով կազմելու շարժառիթը արդէն կորցրած էր լինում իր դրդիչ ոյժը և այլ ևս ժողով չէր հրաւիրվում։ Ձևականութեան պահանջների շնորհիւ այնպիսի օգտաւէտ մի ձեռնարկութիւն, ինչպէս է նահանգի առողջապահական կարիքների լիակատար և բազմակողմանի քննութիւնը, չէր աջողվում և շատ անգամ նոյն իսկ փորձեր չէին անվում թոյլտուութիւն խնդրելու, աչքի առաջ ունենալով նախկին փորձերի ապարդիւն ելքը։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹՌՈՒՑԻԿ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Նամակ Գերմանիայից)

—

Չէ որ մեր մէջ այնպիսի կարծիք է տարածված, թէ գերմանացին ընդհանրապէս սառը բնաւորութիւն ունի, թէ նա առհասարակ ծանրազգաց է, իբրեւ հակապատկեր մեր դիւրազգաց եւ զգայուն հայերին, թէ նա վերջապէս, ինչ որ... կոպիտ է. գերմանացի կինն էլ, հակառակ իր սեռին՝ մի տեսակ քնքշութիւնից իբրեւ թէ զուրկ է, նոյն իսկ իբրեւ թէ այն է, ինչ որ մեզ մօտ էլ ասում են՝ պլումպ է (plump), անճոռնի է մի խօսքով, մանաւանդ արտաքին աշխարհատեսութեան մէջ։ Կարծում են, օրինակ, որ գերմանուհին, թէեւ առում են լաւ տնտեսուհի է, բայց նրա պատրաստած կերակուրը, թխած գաթան ու եփած չիլափլաւը այն համն ու լաղթը չունեն, ինչ որ մեր ազիզ-մազիզ այաների ու ձալօների թխածն ու եփածը, եթէ ի հարկէ այս վերջինը der fall ist, որպէս ասում է գերմանացին։ Այս բանն առերեւոյթ կերեւայ նրանց, որոնք սովոր են Կովկասում կամ Ռուսաստանում իրանց ասած plump գեղջկուհիներին տիկին դարձած տեսնել եւ նրա համեմատ էլ գերմանուհու կամ գերմանացու մասին որ եւ է գաղափար կազմել։

Կովկասցին, հայ թէ ռուս, թէ Թուրք մի եւ նոյնն է, մի առանձին ներքին բաւականութեամբ կը դիտէ եւ կը տպաւորվի գերմանական կեանքի բազմապիսի, համակրելի կողմերով։ Մթթէ վատ կողմեր չը կան նրանց մէջ, մթթէ զրախտ է գերմանական կեանքը, իր երանաւէտ հրաշալիքներով։ Ո՞վ կարող է այս բանը պնդել եւ կուրօրէն իդէալ համարել ու ձգտել ամեն ինչ իւրացնել։ Ծայրայեղութիւնների մասին խօսք չէ կարող լինել։ Բայց մարդ չէ կարող առանց հիացման զգացմունքի դիտել գերմանացուն տանը, դուրսը, խանութում աշխատանքի ժամանակ։ Սա մի երջանիկ ժողովուրդ է իր կեանքի բազմազան հանգամանքներում. որին մի թշուառ, ճնշված, անկիրթ, բայց քաղաքակրթութեան արդասիքներով հեւտաքրքրվող ու տպաւորվող ազգ երանի կը տայ եւ կծկված սրտով կը նախանձի անկեղծօրէն... Աւելորդ չենք համարում, որ մենք էլ, իբրեւ այդ թշուառ ազգի զաւակներից մէկը, իբրեւ ականատես ու ծանօթ վերոյիշեալ բախտաւոր ազգի պայմաններին, մեր թռուցիկ տպաւորութիւններով մի քանի տեղեկութիւններ, դուցէ եւ նորութիւններ հաղորդենք ընթերցողներին։

Հրէն, ֆրանսիացին էլ արտասուքի առատ կայլակներ է թափում՝ իր ազգի անառակ կողմերը, հեղհեղէ ժողովրդի նուազելը, բարոյական, ֆիզիքական անկումը դիտելով եւ օրհասական կործանումը նախագուշակելով։ Անչուշտ շատ բանում նոյնպէս կը նախանձի նա Գերմանիային, որի բնակչութիւնը օր օրի վրա աճում, բազմանում է, մինչդեռ նրա հայրենիքը այդ տեսակէտից հետզհետէ դալկանում եւ հիւծվում է։

Գերմանացին դեռ այդպիսի արտասուքներ չէ թափում եւ գարեջրի բաժակը վերեւ բարձրացրած՝ «Deutschland, Deutschland über alles» է երգում, երջանկութեան գագաթնակէտին հասած կարծելով իրան։

Եթէ մեր թռուցիկ տպաւորութիւններն ուղղակի սկսենք ընտանիքի հիմնաքարով, տնտեսուհով՝ համ մի քաղաքավարական պարտք կը լինենք կատարած, համ էլ, որ գլխաւորն է, մեր վէրքի, ու բաւականին վտանգաւոր վէրքի փաթաթանը բաց արած։ Անչուշտ կը ներեն մեզ հոգեւորականները, որ մենք աստուածաբան չը լինելով՝ յանդգնենք նրանց գիտութեան սահմանները թեւակոխել եւ այնտեղից, Աստուածաշնչից, մի օրինակ բերել, որ, թէեւ մեր գրչի տակից աղաւաղված դուրս կը գայ, բայց եւ այնպէս պարզ ցոյց կը տայ կնոջ պարտականութիւնը եւ նրա գովելի կողմը։ «Կին... ժրաջան պակ է առն իւրում»։ Աշխատասիրութիւն է, որ ակնարկված է առակախօսի յիշեալ ասացուածում եւ որը գերմանացու, առանձնապէս գերմանուհու բնորոշ, աչքի ընկնող զարմանալի յատկութիւնն է կազմում։ Ով որ մանաւանդ Կովկասի փարթամ, զեղխ դասակարգի կանանց վերին աստիճանի ծուլութեան ականատես է եղել, ով որ ներկայ է եղել, թէ ինչպէս մեր այդ մեղկացած արարածները տնտեսական, դաստիարակչական ու բոլոր ընտանեկան գործերն աղախինների, դաստիարակչուհիների, ծառաների ու խոհարարների բարեհաճ արամադրութեանը թողած՝ ամբողջ օրերը դատարկ, ծռոտի-պռոտի, առուսուց «վիզիտ»-ներով են զբաղված, կամ ցերեկոյթների եւ «վէչէրների» ծրագիրներ կազմելով՝ նա կապշի, վեր կը քաշվի, ինչպէս ժողովուրդն է ասում, գերմանուհու արտասովոր աշխատասիրութիւնը դիտելով։ «Բախտաւոր ազգ», մտմտում է մարդ ակամայ։

Այս զարմանալի ջանասիրութիւնը նկատելի է ոչ միայն չքաւոր դասակարգի մէջ, որ իր օրական պարէնը հայթայթելու համար հարկադրված է այս կողմն այն կողմն ընկնելու եւ ընտանիքի վիճակը ամոքելու, այլ անխտիր ամեն դասակարգի մէջ—թէ հարստի, թէ պետական պաշտօնեայի եւ թէ ինտելիգէնտ, կրթված շրջանի։

Մենք ստիպված ենք գերմանուհու աշխատասիրութիւնն առ այժմ վերցնել, որովհետեւ, ամենակարեւոր դեր կատարողի, այն է բժիշկօրի մասին։ Հայոց Թատրոնը չունի բժիշկօր։ Բժիշկօրի խնդիրը շատ ծանր խնդիրներից մէկն է այժմեան թատրոնական գործում։ Ահագին Ռուսաստանը իր 300 թատրոններով, մօտ 12,000 դերակատարներով ունի միմիայն 3—4 լաւ, գործը հասկացող բժիշկօրներ, որոնց միմեանց ձեռքից խլում են թատրոնական անտրէպրենէօրները։

Բժիշկօրը պէտք է լինի ներկայացման հոգին, նրան ուղղութիւն տուղը, նրա իմաստը ըմբռնողը։ Նա պէտք է սեզօնի սկզբից կազմակերպէ բեպերտուար, նա պէտք է ծանօթանայ իր խմբի ոյժերի հետ, նա պէտք է կեանք, հոգի, եռանդ ներշնչէ գործին։ Մենք չունենք այսպիսի բժիշկօր.—եւ ծիծաղելի է թէ ինչու պէտք է ունենանք, երբ բէժիշկօրի պահանջ չէ էլ եղել։ Բայց հայոց թատրոնը պէտք է անպատճառ մի մարդ ունենայ, որ կարդ եւ կանոն պահպանէ խմբի կազմակերպութեան մէջ։

Եւրոպական եւ ռուսաց խմբերում վաղուց ընտելացել են այն մտքին, թէ առանց բժիշկօրի խումբ չէ կարող լինել. այդ խմբերում լինում են դերասաններ տասն անգամ բարձր իրանց հասկացողութեամբ բժիշկօրից, բայց նրանք բոլորը գիտեն դիսցիպլինա ասած բանը եւ ամենքը պէտք է անպայման հպատակվեն այն կարգ ու կանոնին, որի ներկայացուցիչը բժիշկօրն է։ Երկու տարի առաջ, երբ ես Մօսկվա էի, լաւ յիշում եմ, որ մասնաւոր թատրոնի յայտնի տնօրէն Կօրշը պարտաւոր եղաւ հրաժարվել իր ամենալաւ դերասանուհուց, տիկին Ազագարօվայից, յանուն դիսցիպլինայի եւ ամենքն էլ գտնում էին, որ Կօրշի արարմունքը թէպէտ խիստ էր, բայց արդար։ Գալով մեր հայկական խմբին, սրտի ցաւով պէտք է ասենք, որ դիսցիպլինա ասած բանը գոյութիւն չունի, ոչ թէ գոյութիւն չունի, այլ շատերը նոյն իսկ հասկացողութիւն էլ չունեն այդ բանի մասին։ Սիրելով թատրոնը, մօտ լինելով նրան եւ դերակատարներին, ես շատ անգամ վկայ եմ եղել այնպիսի հարցերի, երբ մարդ զարմացած է մնում, թէ որ աստիճանի բարի են ղեկավարները եւ որ աստիճանի իրանց գործը չը յարգող են դերակատարները։ Եւ այդ ըմբոստութիւնը ոչ թէ փոքր ոյժերի մէջն է, այլ բոլորի՝ մեծից սկսած մինչեւ վերջինը, շատ քիչ բացառութեամբ։ Ամեն դերասան, դերասանուհի ունի իր ամպլուան, որի համեմատ էլ բաժանվում են դերերը, բայց հայոց խմբում ամեն մէկը ձգտում է խաղալ լաւ դերեր. այսօրվայ սիրահարը վաղը բեզօնեօր է, կօմիկ, ինչ որ կամենաք։ Մէկը ներկայացման կէսին կանգնում, պահանջում է, որ հեռացնեն յուշարարին, միւսը բեժիշկօրի օգնականին, երրորդը հիւանդութեան պատճառով հրաժարվում է դերերից, բայց այդ հիւանդ պարոնը ման է գալիս քաղաքում, լինում է նոյն ներկայացման, որից հրաժարվել է։ Կատարեալ քաոս։

Ահա այդ քաոսի առաջն առնելու համար պէտք է հրաւիրել մի ղեկավար-բեժիշկօր. թող դա առաջին քայլերում բան չը հասկանայ, ոչինչ. նա կամաց-կամաց կը վարժվի։ Բայց մի բան անհրաժեշտ է, որ նա գոնէ ծանօթանայ խմբի ներքին կազմակերպութեան հետ եւ նրանց կանոններին, լինի խիստ եւ պարտաճանաչ թէ մեծի, թէ փոքրի հետ, բեմական կանոնների ճիշդ ներկայացուցիչ։ Որտեղ անարդարութիւն լինի, այնտեղ հիմնարկութիւնը կամ երկար գոյութիւն չէ կարող ունենալ կամ քայքայված դրութեան մէջ կը լինի։ Ոչ ոք առաջին քայլից բեժիշկօր, դերասան չէ դառնում (այդ դառն, բայց իմաստուն ճշմարտութիւնը անմատչելի է միմիայն պ.պ. Գալֆայեաններին, Յովհաննիսեաններին եւ նմաններին)։ Ցանկալի է, որ մեծ ծանօթ ազգի ծանօթ ազգ, լաւ ծանօթ եւրոպական, ռուսաց եւ հայկական գրականութիւններին։

Սիրելով թատրոնը, յարգելով Բագուի թատրոնի ղեկավարներին, որոնք առանց որ եւ է շահի նուիրված են գործին, մենք դիմում ենք այդ յարգելի պարոններին, որ նրանք լաւ մտածեն այդ կարեւոր հարցի վրա։ Դա ամենամեծ գործն է ապագայ թատրոնի համար։

Թատրոնասէր

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻ ԳԱՒԱՌԻՑ

—

Դալուլար գիւղ, յուլիսի 10-ին

Արդէն երկրորդ տարին է, որ խաղողի այգիները փչանում են «չօռ» կոչված հիւանդութիւնից։ Անցեալ տարի այդ հիւանդութիւնը մեծ ծաւալ ստացաւ Գառնի-Բասար կոչված մահալում, որտեղ խաղողի այգիները շատ մեծ տարածութիւն են բռնում եւ կազմում են գիւղացիների ապրուստի ամենագլխաւոր միջոցը։ Հիւանդութեան հետեւանքը այն եղաւ, որ աշնանը գիւղացիները հարիւր պուդ տուող այգուց ստացան միայն 40—50 պուդ, այն էլ չը հասած, չորացած եւ կամ փտած։ Փոխանակ պուդը 60—70 կ. ծախելու, գիւղացիները ստիպված եղան 35—45 կ. ծախելու։ Վնասը շատ զգալի էր։ Փոխանակ մտածելու հիւանդութիւնն է, որ ակնարկված է առակախօսի յիշեալ ասացուածում եւ որը գերմանացու, առանձնապէս գերմանուհու բնորոշ, աչքի ընկնող զարմանալի յատկութիւնն է կազմում։ Ով որ մանաւանդ Կովկասի փարթամ, զեղխ դասակարգի կանանց վերին աստիճանի ծուլութեան ականատես է եղել, ով որ ներկայ է եղել, թէ ինչպէս մեր այդ մեղկացած արարածները տնտեսական, դաստիարակչական ու բոլոր ընտանեկան գործերն աղախինների, դաստիարակչուհիների, ծառաների ու խոհարարների բարեհաճ արամադրութեանը թողած՝ ամբողջ օրերը դատարկ, ծռոտի-պռոտի, առուսուց «վիզիտ»-ներով են զբաղված, կամ ցերեկոյթների եւ «վէչէրների» ծրագիրներ կազմելով՝ նա կապշի, վեր կը քաշվի, ինչպէս ժողովուրդն է ասում, գերմանուհու արտասովոր աշխատասիրութիւնը դիտելով։ «Բախտաւոր ազգ», մտմտում է մարդ ակամայ։

Այս զարմանալի ջանասիրութիւնը նկատելի է ոչ միայն չքաւոր դասակարգի մէջ, որ իր օրական պարէնը հայթայթելու համար հարկադրված է այս կողմն այն կողմն ընկնելու եւ ընտանիքի վիճակը ամոքելու, այլ անխտիր ամեն դասակարգի մէջ—թէ հարստի, թէ պետական պաշտօնեայի եւ թէ ինտելիգէնտ, կրթված շրջանի։

Մենք ստիպված ենք գերմանուհու աշխատասիրութիւնն առ այժմ վերցնել, որովհետեւ,

դութիւնից ազատվելու միջոցների մասին, գիւղացիները (ինչպէս ամեն այդպիսի դէպքում) վերագրեցին այդ պատուհասը Աստուծուն. մի գուցէ, ասում էին նրանք, մենք մեր մեղքերով շարժել ենք Աստուծու զայրոյթը։ «Այս տարի է միայն», կրկնում էին նրանք եւ հաւատացած էին, որ էլ չի պատահի այդ հիւանդութիւնը։

Բայց, տարաբախտաբար, այս տարի էլ նոյն հիւանդութիւնը արդէն սկսվել է նորից մեր մահալում երեւալ։ Հիւանդութիւնը այսպէս է սկսվում. նախ տերեւների ներքի մասում երեւում է մամուռ, սպիտակ գոյնով, մեծ մասամբ եղանակի խոնաւութիւնից. հետզհետէ չատանալով այդ մամուռը միանգամայն չորացնում է տերեւը։ Տերեւը չորանալու ժամանակ մամուռը ատանում է սեւ գոյն։ Վազերի նորաբողբոջ ճիւղերի տերեւները թափվում են եւ վազերը մերկանում են, որից յետոյ արդէն սկսվում է արագութեամբ փչանալ խաղողը։ Խաղողի հատիկը կիսով չափ նախ սեւանում է, կոչտանում եւ զրկվում է հիւթ ծծելու ընդունակութիւնից ու հետզհետէ չորանում։ Խաղողի փչանալով չարիքը դեռ չէ վերջանում, փչանում են եւ խաղողի վազերը, մի քանի տարվայ հատ ճիւղերը, որոնց գիւղացիները գարնանը ստիպված են լինում կտրել եւ դէն գցել։ Ձեռքերը ծալած նստել եւ ապաւինել միայն Աստուծուն —դա բաւական չէ։

Մեր կարծիքով հարկաւոր է շատ շուտ միջոցների դիմել, որպէս զի կարելի լինի ազատվել օր առաջ վրա եկող չարիքից, այն է դիմել ուր հարկն է եւ խնդրել մէկ բանիմաց եւ բարեխիղճ ֆիլօկսէրիստ ուղարկել, թէկուզ հէնց գիւղացիների ծախսով։ Սրանից երեք տարի առաջ մեր մահալը եկաւ ֆիլօկսէրիստ պ. Աբսէն Քալանթարը. պտտելով մեր մահալում գիւղից գիւղ, նա բացատրում էր մեր ժողովրդին հիւանդութիւնը, նրա տարածվելը եւ հետեւանքները։

Այդ ժամանակ «սեւ» կոչված հիւանդութիւնը գոյութիւն չունէր։ Թէեւ պ. Ա. Քալանթարը սրտանց աշխատում էր, որ ժողովուրդը ըմբռնէ իր բացատրութիւնները, որպէս զի հիւանդութիւնից կարելի լինի ազատել խաղողը, սակայն նրա օրով առիթ չը ներկայացաւ, որ գործնականապէս ցոյց տար միջոցները։ Պ. Ա. Քալանթարի այստեղից գնալուց յետոյ էլ մենք ուրիշ ֆիլօկսէրիստ մեզնում չենք տեսել։

Պէտք է անպատճառ սովորեցնել կուել չարիքի դէմ գործնականապէս։ Այդ դէպքում միայն գիւղացիները կը հաւատան եւ կսկսեն հետզհետէ իրանք եւս միջոցների դիմել։ Հաժողված եմ, իբրեւ այդու տէր, որ եթէ այս «սեւ» կոչված հիւանդութիւնը այսպէս շարունակվի, մեզանից շատերը ստիպված կը լինեն քանդելու իրանց խաղողի այգիները։

Ց. Աբրահամեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, յունիսի 14-ին

Մեր երկիրը զուրկ է հասարակական աշխատանքի տներից, անկելանոցներից եւ այլ բարեգործական հիմնարկութիւններից. բնականաբար օր-օրի վրա զարգանում է մի ատոր

պարապմունք, որով աշխատանք չը գտնող եւ հաշմանդամ մարդիկ միջոց են գտնում մի կերպով քաշ տալու իրանց թշուառ գոյութիւնը։

Այդ պարապմունքը կոչվում է մուրացկանութիւն։ Մուրացկանութեամբ պարապողների թիւը աւելի աճեց վերջին չորս-հինգ տարիների ընթացքում, երբ մի կողմից թիւրքական կոտորածները լցրին մեր երկիրը բազմաթիւ գաղթականներով եւ միւս կողմից՝ շնորհիւ նորաբաց գործարանների անփորձ եւ անկանոն կառավարութեան՝ լոյս են գալիս ամեն տարի բաւական թւով մի ոտանի, մի ձեռնանի եւ այլ զանազան դժբաղդութիւնների եւ ազէտների ենթարկված մարդիկ, որոնք անճարացած նոյնպէս դիմում են այդ արհեստին։

Թիֆլիսը համեմատաբար աւելի մեծ քանակութեամբ աղքատ—մուրացկաններ ունի իր մէջ, քան Կովկասի ուրիշ քաղաքները։ Ամեն օր շրջող մուրացկաններից քաղաքի արտաքին վայելչութիւնը պահպանելու համար, ոստիկանութիւնը շաբաթվայ մէջ միայն մի օր թոյլ տուեց նրանց շրջելու քաղաքում. սակայն վերջերս այդ մի օրն էլ վերացվեց եւ խստիւ արգելվեցաւ մուրացկանութիւնը։ Բայց սոված մարդու վրա ինչ տեսակ օրէնք կարելի է գործադրել։ Էլի առաջվան նման սոված մարդիկ շաբաթ օրերը տաճարներով թափառում են քաղաքի փողոցներում։ Ի՞նչ կարելի է անել։ Միթէ մենք մէկին կարող ենք ասել՝ հաց մի կեր եւ ապրիր։

Այսօր ես ականատես եղայ մի այսպիսի տեսարանի։—Փողոցային ոստիկանը, ինչպէս մի լաթի կտոր, փողոցի ցեխերի եւ կոշտ քարերի վրայից, բառի հարազատ մտքով, քարշ էր տալիս դիպի ոստիկանատուն պատառոտված մի տակ շապիկով մի երեխայի։ Երեխայի աղիողորմ լացը եւ արձակած սրտաճաք ճիչերը գրաւել էին գլխաբաց մարդկանց մի ստուար բազմութիւն։ Երբ ճչացող երեխայի աղէկատուր ձայնին չէր կարող դիմանալ այլ եւս ոչ մի մարդկային սիրտ, Խաչատեան ազգանունով մի երիտասարդ միջամտեց եւ պահանջեց, որ բաց թողնվի երեխան։ Փոքրիկը, օգտվելով յարմար առիթից, փախաւ։ Իսկ ոստիկանը առաջարկեց երիտասարդին ներկայանալ ոստիկանատունը։ Ես իմացայ, որ այնտեղ արձանագրութիւն է կազմված այս առիթով։

Այսպիսի դէպքեր եւ տեսարաններ համարեա թէ անպակաս են։ Միթէ չէր կարելի մի ուրիշ միջոցով մուրացկանութեան դէմն առնել։ Արդեօք մենք հետաքրքրվեցինք իմացանք, որ մուրացկանութիւնը գործադրվում է իբրեւ շահաւէտ եւ աւելորդ ազահութեան մի միջոց։ Մենք կարծում ենք, որ մուրացկանների մեծամասնութիւնը սովամահ կը լինէր, եթէ ամաչէր ձեռք մեկնել եւ ողորմութիւն խնդրել. կամ կատարելով ոստիկանութեան պահանջը, հրաժարվէր մուրացկանութիւնից ստացած մի կտոր փշրանքից։

Թիֆլիսում կը լինեն եւ քաղցից մեռնողներ։

Ա.Ա. Համբարձումեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Թիֆլիսի երկաթուղային կայարանի ապրանքային պահեստում պատահած հրդեհից առաջացած վնասները ճշդութեամբ որոշելու համար, անդրկովկասեան երկաթուղու վարչութիւնը պահանջում է ապրանք ուղարկողներից եւ ստացողներից ներկայացնել ապրանքաթղթերի օրինակները եւ յայտնել, թէ որքան արժէին այրված ապրանքները։

—

Այս տարվայ հունձը Ռուսաստանում անբաւարար է։ Երկրագործութեան եւ պետական

կալուածների մինիստրութեան մէջ ստացված տեղեկութիւններից երեւում է, որ մինչեւ անգամ Ռուսաստանի միջին նահանգներում, որտեղ մինչեւ յունիս ամիսը յոյս ունէին աւելի քան բաւարար հունձի, այժմ բոլորովին կորցրել են որ եւ է հունձ ստանալու յոյսը։ Պրիբալտեան երկրի նահանգներից նոյնպէս ստացվում են տեղեկութիւններ վատ հունձի մասին։

—

«Финл. Газета» լրագիրը հաղորդում է, որ Հէլսինգֆորսի բնակիչ՝ գրականագէտ Ժան Բօլդտ յուլիսի 20-ին ձերբակալվեց ոստիկանութեան ձեռքով նրա համար, որ քաղաքի զանազան մասերում փակցնում էր իր հեղինակած պլակատները, որի մէջ բողոք էր յայտնում ամեն տեսակ զինուորական ծառայութեան դէմ եւ հրաւիրում էր հասարակութիւնը միանալ իր կարծիքին։

—

Այն մասնաժողովը, որ Արդօնում վերաքննում էր օսերէն աւետարանը, այժմ վերջացրել է իր պարապմունքները։ Օսերէն աւետարանը նոր խմբագրութեամբ ներկայացված է Վլադիկավկազի եւ Մոզդոկի վիճակի ռուս եպիսկոպոսի հաստատութեանը։

—

Առաջիկայ տարվանից պետական երկաթուղիների վրա կը սկսեն գործ ածվել մարդատար գնացքների համար ուժեղ եւ արագընթաց շոգեմեքենաներ։

—

Հաղորդակցութեան ճանապարհների մինիստրութիւնը մշակել է մի շարք միջոցներ, որոնց նպատակն է բարւոքել ճանապարհորդների երթեւեկութեան գործը ռուսական երկաթուղիների վրա եւ աւելացնել մարդատար գնացքների թիւը։ Բացի սրանից միջոցներ են ձեռք առնված բարելաւելու երկաթուղային գործակալների կազմը եւ ապավովելու նրանց նիւթական դրութիւնը։

—

Ֆինանսների մինիստրութիւնը մտադրութիւն ունի շատ կարճ ժամանակից յետոյ ուղարկել անբերրիութիւնից վնասված տեղերը յատուկ գործակալների՝ մանրամասն տեղեկութիւններ ժողովելու համար հացահատիկների վաճառանոցի դրութեան եւ նրանց գների մասին։ Այդ գործակալներին յանձնված կը լինի նաեւ մեծ քանակութեամբ հացահատիկներ գնել անբերրիութիւնից վնասված տեղերը ուղարկելու համար։

—

«Новое Обозрѣніе» լրագրին հեռագրում են Բալախանիից յուլիսի 29-ից. «Այսօր առաւօտ ծագած հրդեհից այրվեցին 60 վիշկաներ, նրանց մէջ գտնված գոյքը, նաֆթի մարբներ եւ պահեստներ։ Վնասներ կրեցին Կոկորեվ, Կրասիլնիկով, Նօբէլ, Ադամեան եւ ուրիշները։ Հրդեհը շարունակվում է։ Վնասները հսկայական են»։

—

Նոյն լրագրին հաղորդում են, թէ Լէնքօրանի արքունի գանձարանի կառավարիչ Կոզուբսկի, որ անձնասպանութիւն գործեց մօտ օրերումս, ինչպէս պարզվեց, 1500 բուբլի էր

թը՝ մի քանի անգամ էլ ժուռ-ֆիքս սարքէ, банковка եւ вертушка խաղայ, ու իբրեւ գեղեցիկ արարած՝ դառը բոպէներին իրան գուրգուրէ... Այսպէս է մեր պարոնների հայեացքը, այս է մեր տեղի ընդհանուր աշխարհայեցողութիւնը կնոջ կոչման եւ նրա պատակի վերաբերմամբ։ Եւ այս ընդհանուր հասարակական կարծիքի տակ ճնչված, խեղդված, կամ հէնց իսկ այդ կարծիքը վեր ու գերադաս համարելով, հայուհին ու հայը, մի եւ նոյն է, աւելի լաւ կը համարէ առանց ամաչելու, առողջ մարմնով ու կազմուածքով ողորմութիւն խնդրել, քան թէ մէկի մօտ աղախին մտնել կամ լուացք անել ու իր օրական պարէնը դրանով, մաքուր աշխատանքով հայթայթել։

Իսկ գերմանուհին. ինչ կրթութեան, ատիճանի եւ դասակարգի էլ որ պատկանելիս լինի, նա խոյս չէ տալիս, չէ ամաչում աշխատանքից, թէկուզ ամենաանմաքուր հանգամանքների ու պայմանների հետ կապված լինի այդ աշխատանքը։ Ահա կը տեսնէք մի այրի, 50—60 տարեկան մի պառաւ կին, որ, թէեւ իր հանգուցեալ ամուսնու 1000 բուբլու չափ կենսաթոշակն ստանում է, նոյն իսկ, եթէ կամենում էք սեփական տներ էլ ունի, բայց դրանով չը բաւականանալով, տանը պարապ չը մնալու եւ զորաբաւծութիւն չանելու համար, սենեակներ է վարձով տալիս, անձամբ տները

մաքրում, վեր քաշում, յատակն ու սանդուղները լուանում, ամեն տեսակ ծառայութիւններ կատարում։ Իր դուսարը, որ մեր 5—6 դասարանի կրթութիւն ունի, օրվայ մի մասը օգնում է մորը եւ այնուհետեւ գնում տներում կար անում, փող վաստակում եւ իր ապրուստն արժանավայել կերպով ապահովում, առանց աղախիններին ու խոհարարներին մեզ նման ամսական մի քանի տասնեակ բուբլիներ իզուր տեղը վճարելու։

Ապա ինչ լայեղ կանէ մեր տգէտ կօխտայ ձալօն, մեր статская совѣтница-ն որ կերակուր եփէ, տուն մաքրէ, առանց քօծի ու բջի վիս էկատրէբա։ Կամ մեր շամախեցի ու զարաբաղցի այանների բողոքում միթէ թիքէն կուլ կերթայ, մինչեւ որ поваръ-ը չեփէ, горначная-ն столъ-ը накрывать ու лакей-ը фракъ-ը հագին կերակուրը подавать չանէ։

Չէ որ գերմանուհիներն էլ համապատասխան չրջաններում կանայք են, նիւթապէս նոյնպէս լաւ պայմաններում, եւ մերոնցից, այսինքն իրանց կրթված համարողներից, մտաւորապէս աւելի բարձր կանգնած։

Ասածներս զուտ փաստեր են, իրականութիւնից վերցրած։ Պատահել ենք մեզ մօտ 1500—2000 բուբլի տարեկան եկամուտ ունեցող ամենասակաւանդամ ընտանիքի, որ 700—800 բուբլի խոհարարի ու այլ ծառաների

վատնել եւ բացի դրանից չատ պարտքեր էր արել։ Կոզուբսկի անձնասպանութիւնից առաջ վերցրել էր գանձարանի դրամի պահեստից 10,000 բուբլի եւ տուել կնոջը, բայց հանգուցեալի կինը ամբողջ գումարը, առանց որ եւ է պակասորդի, վերադարձրեց գանձարանին։ Կոզուբսկու ընտանիքը մնաց առանց ապրուստի միջոցների։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են. «Մեզ մօտ է երգիչ պ. Կոստանեանցը. երգում է «Արկադիա» կոչված ամարային այգում Մակսակովի օպերային խմբի մէջ։ Երիտասարդ ու ջանասէր երգիչը, չնորհիւ իր երաժշտական ընդունակութեան եւ աշխատանքի, օր ըստ օրէ առաջադիմում, աւելի է աջողութիւն ունենում եւ հասարակութեան սէրն ու համակրութիւնը գրաւում։ Յուլիսի 20-ին Մասկանիի «Գիւղական պատիւ» օպերայում չատ մեծ աջողութիւն ունեցաւ. Տուրիդդիի դերում ցոյց տուեց գեղարուեստագէտի նուրբ ճաշակ ու երգչի հմտութիւն։ Հասարակութիւնը ամեն մի կտորից յետոյ բուռն ծափահարութեան էր արժանացնում արտիստին։ Օպերան վերջացել էր, բայց դեռ դահլիճը երկար ժամանակ թնդում էր ծափահարութիւններից։ «Բրավո»-ները ստիպեցին երգչին մի քանի անգամ բեմ դուրս գալու։ Այս անգամ արդէն մեծ պրոգրէս էին գտնում պ. Կոստանեանցի մէջ... Նա 2 ամիս սրանից առաջ եղած երգիչը չէր։»

—

ՂՈՒԲԱՑԻՑ մեզ գրում են. «Ուրվացի Իսլամ-Մամէդ-օղլին ներկայ տարվայ մարտի 1-ին ցանում է իր տան ագարակում գետնախնձոր. այդ բանին հակառակ է լինում հայրը՝ Մամէդ-Մամէդ-օղլին, որ գալիս է եւ չէ թողնում նրան սկսած գործը վերջացնելու։ Վէճ է ծագում, որի ժամանակ ծերունի հայրը խփում է իր որդուն մահակով մի քանի անգամ, որդու համբերութիւնը հատնում է, իր կողմից նա էլ ձեռում պահած երկաթէ բահով խփում է հօրը գլխին, վերք հասցնում եւ փախչում է։ Արիւնաթաթախ ծերունի Մամէդին բերում են տուն. նա պատմում է եղելութիւնը վկաների մօտ գիւղի տանուտէրին։ Քննիչը բանտարկում է հայրասպան Իսլամ Մամէդ-օղլուն։ Այդ գործի քննութիւնը Բագուի նահանգական դատարանի այստեղի բաժնում նշանակված էր յուլիսի 24-ին։ Յանցաւորին պաշտպանում էր դատարանի կողմից նշանակված Մ. Սալամբէգեանց, որը խնդրեց դատաւորներից պատժել, մեղաւոր ճանաչելով նրան ոչ թէ հայրասպանութեան, այլ պարզապանութեան մէջ, այլ այն բանի մէջ, որ նա բռնով միայն վիրաւորել, առանց սպանութեան դիտաւորութիւն ունենալու։ Դատարանը, հիմնաւորելով պաշտպանի պատճառաբանութիւնը, դատապարտեց Իսլամ-Մամէդ օղլուն երեք ու կէս տարվայ բանտարկութեան։»

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ գրում են. «Ներսիսեան դպրոցի նախկին ուսուցիչ պ. Ալ. Մուրադբէկեան ընդունվել է Էջմիածնի միաբան եւ շուտով տեղի է ունենալու նրա ձեռնադրութիւնը։»

—

վարձ է տալիս։ Միթէ այս վրդովեցուցիչ չէ։ Մի անգամ դէպք ունեցանք մի լաւ ընտանիքում գիշերօթիկ լինելու։ Տիկինը կրթված, զարգացած կին էր, պետական խոհրդականի (մօտաւորապէս մեր статская совѣтница-ն) այրի, տիրապետում էր եւրոպական մի քանի լեզուների։ Երեք դուսար ունէր, որոնք անձամբ մաքրում էին սենեակները, կերակուր մատուցանում։ Երեքն էլ վարժուհիներ։ Պահում էր 15—20 գիշերօթիկներ, անձամբ կերակուր եփում բոլորի համար, գիշերօթիկներիս հետ միասին ճաշում, ընթրում եւ պատկառելի դիրք վայելում։ Ապա ո՞ր հայուհին, ո՞ր կովկասուհին այս բանը կանէ։ Ի՞նչ լայեղ կանէ կերակուր եփել։ Չէ՞ որ չորերից խոհանոցի հոտը կը գայ, կամ քնքոյշ ձեռքերը կը կոշտանան, ու վիզիտ արած ժամանակ ազգային գործերը լաւ չեն գնայ։ Ի՞նչ կասեն մարդիկ, ինչ կասեն մեր «значекъ» ունեցող տեխնօլոգ-ինժենէրները, երբ որ Դարիա Զու

ԶԱՐԴԱԽԼՈՒ գիւղից (Գանձակի նահանգ) մեզ գրում են. «Մեր գիւղում գողութիւնը բացէ ի բաց առուտուրի է նմանում. գարուն բացվելուց դէսը մօտ 100 գլուխ ձի ու եզ են գողացել։ Շրջակայ թուրքերը քանդեցին մեր գիւղը. ոչ ոք իր անասունի տէրը չէ. գիւղացիք երկիւղից չեն կարողանում արօտ տանել իրանց ձին ու եզը։ Այսօր ութերորդ օրն է, որ Զարդախլուից երիտասարդ Խաչատուր Վարթեվանեանցը, որը գնացել էր հարեւան Երմաշլուի թուրք հասարակութեան մէջ փնտռելու իր գողացված ձին, կորել է իր ձիով։ Ցուսահատ ծնողները եւ ազգական կանայք, հաւաքվելով եկեղեցին, ողբում են երիտասարդի կորուստը։ Դարձնում ենք այս հանգամանքների վրա տեղական ոստիկանական պրիստավի ուշադրութիւնը, որ ազգով թուրք է»։

—

ՄԱՆԳԼԻՍԻՑ մեզ գրում են. «Յուլիսի 21-ին այստեղ կայացաւ պ.պ. Նալբանդեանի եւ Մամաջանի կոնցերտը, որին մասնակցում էր եւ պ. Ասատուրեանը։ Համերգից յետոյ կայացաւ շատ ուրախ պարահանդէս։ Պարահանդէսի նիւթական կողմը շատ տուժեց չնորհիւ վերջին օրերս տեղացող անձրեւների»։

—

ԱՇՏԱՐԱԿԻՑ մեզ գրում են. «Ընդհանրապէս այս տարի շրջակայ գիւղերի ցանքերը շատ լաւ են։ Ապարանի ցանքսերը նոյնպէս աչող են. խոտահարքն սկսվել է եւ շատ առատ է եւ էժան, գարիների հունձը շուտով կը սկսվի։ Վանքապատկան գիւղերը, անցեալ տարվան նման, այս տարի էլ կապալով չեն տուել։ Այս վերջինս միջոց է տալիս պաշտօնից վռնդված «զալավաներին» չաղ-չաղ ոռճիկներ ստանալու։ Մեր գիւղումն էլ մէկը կայ, չէ կարելի նրան էլ մէկ պաշտօն տաք, որովհետեւ «զարկելու» մէջ շատ հմուտ է»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

Տրապիզօն, յուլիսի 17-ին

Վաղուց, շատ վաղուց է, որ ոչինչ չեմ գրած Պօնտոսի մայրաքաղաքի ազգային կեանքէն։ Եւ ինչ գրէ մարդ, երբ մեզ յուզող խնդիրները միշտ տխրացուցական կնիք մը ունին վրանին եւ անտանելի կերպով ճանձրանալի են մեզմէ հեռու ապրող հայութեան։ Միւս կողմէ մարդ կը տատամսի գրիչ ձեռք առնել, երբ կը տեսնէ, որ մի լրագրական յօդուածի պատճառաւ անմեղ մարդիկ վտանգի կենթարկվին։ Անկարող բուն թղթակցին վնասելու, կրքոտ աղաները կը սկսին իրենց այս կամ այն հակառակորդին մատնանիշ ընել եւ ատելութիւնը տանել մինչեւ մատնութիւն։

Թիւրքական բէժիմի եւ կրօնական այլազան պրօպագանդայի տարափի տակ, մեր հասարակական գործունէութիւնը կղերի շուրջը կը դառնայ միշտ։ Տրապիզօնցիներու այս վերջի մի տարվայ մասնաւոր զբաղումը առաջնորդական խնդրի պայքարն էր, որը հրահարուելով խայտառակ չափեր առաւ։ Շատ անգամ մամուլի մէջ ցաւ կը յայտնվի, որ մեր հասարակ-խաչագողները Պոլիս նստած՝ չեն երթար գաւառները հովուելու անպաշտպան ժողովուրդը։ Բայց, մեր կարծիքով—գոնէ մեր քաղաքի համար—առաջնորդներու կամ տեղապահներու ներկայութիւնը ուղղակի վնասակար է. ընտրութեան համար կուսակցութիւն, խռովութիւն, ամսաթոշակի համար անհամաձայնութիւն, ընտրողի հաճութիւնը ստանալու համար երկար բանակցութիւններ, առաջնորդի գալէն յետոյ հակառակութիւններ, լուռ ու մունջ կամ բացայայտ անձնական մրցումներ, առաջնորդը ճամբելու համար նորէն յուզումներ, պառակտումներ. տասը տարիէ ի վեր մեր ժողովուրդը ուժասպառ եղաւ առաջնորդներու պատճառով. իսկ այս անգամ տուժողը պիտի լինի խեղճ մանկտին, որ բացարձակապէս ենթարկված է տգէտ հայրերու կամայականութեան։

Ատուածարան եւ դատարկագլուխ Խորով վարդապետ Պեհրիկեանը ճամբայ դնելէն յետոյ, մեր սիրելի հայրենակիցները չուզեցին առանց գլուխի մնալ եւ ահա ծագեցաւ առաջնորդական չարաբաստիկ հարցը։ Աղաներու թեկնածուն ինչ որ մի Տէրունեան վարդապետ էր, առաջադիմականներունը՝ Ներսէս եպիսկոպոս Ալանեան, Վանի նաղելի առաջնորդը։

«Սատանան երկու որդի ունի—կրսէ ժողովրդական առածը—մէկին անունը Սըլիկ, միւսին անունը Բըլիկ, կրող Սըլիկին ալ, Բըլիկին ալ»։ Այս առածը հանգամանքամբ կարելի է գործածել մեր բոլոր կրօնականներու համար, բայց մեր աղաներն ու պարոնները սատիկ ոգեւորվեցան իրենց թեկնածուներով. բոլոր լուռած, թագ կեցած կեղտերն ու կրքերը դուրս ժայթքեցին ու գնացին փաթաթվելու դպրոցի վզին։

Ուսումնական խորհրդի անդամները եւ ուսուցիչները հակառակորդ կողմն էին, այդ բաւական էր, որ միջոցներու մէջ խտրութիւն չը գնող աղաները, իրենց հարուածները ուղղէին դպրոցին եւ անուանարկէին ուսուցչական խումբը, որ իր բոլոր պակասութիւններով հանդերձ, շատ բարձր է կանգնած Թիւրքահայաստանի իր պաշտօնակիցներէն եւ անփոփոխ կը շարունակէ գործադրութեան մէջ պահել Տէր-Միրաքեաններու գծած դպրոցական ծրագիրը։ Մենք շուտով կը վերադառնանք մեր դպրոցական գործի ներկայ դրութեան, առայժմ ըսենք, որ այնքան մեծ աղմուկ հանած առաջնորդական խնդիրը բոլորովին ապարդիւն անցաւ. ընտրուած առաջնորդը կառավարութիւնը չը հաստատեց, հիմա, իբրեւ տեղապահ, գալու է Եղնիկ վարդապետ Պապայեան, արժանաւոր մը, որ պիտի վերակազմէ վարչութիւնը, ուսումնական խորհուրդը, կըրքերը պիտի հանդարտեցնէ եւ դպրոցը ազատ պահէ խաւարամիտներու ճանկերէն. իսկ այդ պիտի կարողութիւն ունեցող արժանաւոր դեռ մենք բաղդ չունեցանք տեսնելու։

Տեղացի

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Ազատամիտ կուսակցութեան մեծամասնութիւնը չը մասնակցեց այն քուէարկութեանը, որ տեղի ունեցաւ Գօրհօուզի առաջարկութեան վերաբերմամբ՝ պարսաւանք յայտնելու Զեմբէրլէնին։ Յօդուտ առաջարկութեան ձայն տուին միայն իրլանդացի նացիօնալիստները եւ մի քանի արմատականներ։ «Daily News»-ում նկարագրելով յուլիսի 20-ի նիստը, յայտնի հրապարակախօս Մասսինդէմ զայրոյթով նկատում է. «Քուէարկութիւնների վերջը ստորացուցիչ էր։ Գօրհօուզ առաջարկեց կրճատել Զեմբէրլէնի ոռճիկը, բայց յետոյ թողեց առաջարկութիւնը բաղդի կամայականութեանը, իսկ այդ ժամանակամիջոցում դիմադրական կուսակցութեան պարագլուխները կարողացան յօդս ցնդել։ Բէդմօնդ եւ Դիլլօն պնդեցին, որ Գօրհօուզի առաջարկութիւնը ձայնի դրվի. հասկանալի է, որ առաջարկութիւնը մերժվեց ձայների ահագին մեծամասնութեամբ։ Նիստը մի փայլուն ապացոյց էր, որ ազատամիտ կուսակցութիւնը վերին աստիճանի ստորացուցիչ դրութեան մէջ է այժմ։ Նրա շարքերը դատարկվել են. մեծ արդիւնիները արհամարհված կամ փոփոխված են այն աստիճան, որ ճանաչել ու հասկանալ անգամ անկարելի է։ Կուսակցութիւնը զարհուրելի կերպով ընկել է եւ նրա աւերակների վրա միատէր Զեմբէրլէն կատարում է իր խայտառակ յաղթանակը։

—Ֆրանս-չինական մամուլը շարունակում է լուռեցես հայեացքներ յայտնել ապագայի վերաբերմամբ։ Ահա, օրինակ, ինչ է գրում «Echo de Chine» լրագիրը. «Ոչ մի կասկած չը կայ այն հանգամանքի վերաբերմամբ, որ մենք կարճ ժամանակից յետոյ նորից ստիպված պէտք է լինենք վերադարձնել մեր զօրքերը Չինաստան։ Մեր զօրքերը ոչ միայն չը տիրեցին Չինաստանին, այլ եւ չը պատժեցին նրան, ինչպէս հարկն էր։ Տեանձինում քիչ առաջ եւրոպացիները ոտնեցին քաղաքի աղատութեան տարեդարձը «Մեծ Բռունցքի» պաշարումից, բայց ամենուին զարմանալու բան չի լինի, եթէ այդ տօնը կատարվի եւ հետեւեալ տարի, միայն դերերի փոփոխութեամբ, այսինքն քաղաքի աղատութեան տօնը կատարեն բռունցքամարտիկները, Տունֆուսիանի նախագահութեամբ, որ կը բռնէ գեներալ Վօգակի տեղը» «Ostasiatische Lloyd» լրագիրը, առաջ բերելով այս հատուածը Ֆրանս-չինական մամուլից, աւելացնում է, թէ այս խօսքերին թէպէտեւ չէ կարելի չափազանց մեծ նշանակութիւն տալ, բայց եւ այնպէս նրանք բնորոշ են, որպէս Չինաստանում տիրող տրամադրութեան նկարագիր։ Ըստ երեւոյթին հետզհետէ աւելի եւ աւելի տարածվում է այն համոզմունքը, որ անկարգութիւնները ամենուին վերջացած չեն եւ որ վաղ թէ ուշ նորից տեղի պիտի ունենան ընդհարումներ եւ աւելի եւս լուրջ պատերազմ։

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ամեն տեսակ նորութիւն կարելի է սպասել Թիւրքիայից։ Ահա ինչ է տպված «Սուրհանդակ» լրագրի մէջ.

ՆՈՐՕՐԻՆԱԿ ՀԻԱՆԴՈՒԹԻՒՆ ՄԸ

Քէօթահիոյ կիները

—

«Քէօթահիայէն կը գրեն թէ նորօրինակ հիանդութիւն մը ծագած է, ուրկէ բռնուող կիները կատուի պէս կը մլաւեն, աքաղաղի պէս կը խօսին և զանազան կենդանիներու ձայներ կը հանեն։ Պոլսական թերթի մը մէջ այդ լուրը կարդալով աշխատութեան սենեակիս մէջ ոստում մը ըրի և անմիջապէս ճամբայ ելայ Քէօթահիա երթալու համար։ Ճամբան այդ տարօրինակ լուրը հետզհետէ հեռաքրքրութիւնս կարթնցնէր։ Ի՞նչպէս, կըսէի ինքնիրենս, հաւասիկ կիներ, որոնք իրենց շատախօսութենէն, շաղակրատութենէն և խօսելու մենաշնորհին տէրն ըլլալէ զժգոհ՝ հիմա ելեր են անասուններու լեզուն կը խօսին։

Այս մտածումներով պաշարուած Քէօթահիա հասայ և դիմացս ելող կինը հարցաքննել փորձեցի այդ հիւանդութեան մասին, և զարմանօք գրեթէ ամենէն ալ «Կոմունիկու»-ի, «Միաւ»ի «Մէկէկ»-ի ձայներ լսեցի։ Հաղիւ թէ փողոցին մէջ յառաջացած էի, երբ սիրուն կին մը տեսայ, որ ինծի մօտենալով մելամաղձիկ «միաւ» մը ըրաւ, մարգարտաշար ակռաները ինծի ցուցնելով։ Քիչ մը անդին 16 տարեկան գեղանի աղջիկ մը սկսաւ աքաղաղի պէս խօսիլ։ Ուրիշ կին մըն այլ այն ատենան վարպետ կերպով կովի մը ձայնը հանեց, որ ինքզինքս զսպել կարծեցի։ Պահ մը ետքը բազմաթիւ կիներէ շրջապատուեցայ, որոնք սկսան իրենց հանած անճոռնի ձայներովը մեծ ժիսոր մը պատճառել։ Ամէն տարիք ունեցող կին կար անոնց մէջ, պառաւէն սկսեալ մինչև 15 տարեկան աղջիկը։

Գ.

*

Քէօթահիայի բժիկ Տ.Գ. Սիմօբուլոս այս հիանդութեան վրա հետեւեալը կը գրէ.—«Այս տարօրինակ հիանդութիւնը երեք տարիէ ի վեր կը տեւէ։ Բաւական ատեն առաջ 25 տարեկան կին մը յանկարծ հիւանդանալով սկսաւ աքաղաղի ձայն հանել։ Քիչ ետքը ուրիշ կին մը սկսաւ մլաւել և վեց ամիս չանցած 60-ի չափ կիներ այդ ախտէն վարակուեցան։ Ասոնցմէ ոմանք կոռնան, ոմանք կը մռնչեն և ուրիշներ ալ կը մլաւեն, կը ճռուոզեն և այլն և այլն։ Այնպէս որ անոնց մէջ գտնուող անձ մը ինքզինքը զանազան տեսակ կենդանիներով լեցուն անտառի մը մէջ պիտի կարծէ։ Դիտելի է, որ 45 տարեկանէն վեր կին ասկէ չի բռնուիր։ Սակայն անհաւատալի թւի ձեղի թերեւս, սակայն ճիշդ է և յառաջ եկած տեսակ մը խղէրիախ»։

Իզմիրեան թերթ մը կը գրէ, թէ այս առաջին անգամը չէ, որ կանանց մէջ այս տեսակ հիանդութիւն մը կը ծագի։ Ժամանակին Վիեննայի, Բարիզի եւ ուրիշ տեղերու մէջ ալ պատահած են նմանօրինակ դէպքեր։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ-ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

28 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Յուլիսի 28-ին Պետերբուրգ հասան եւ ուղեւորվեցին Պետերհոֆ Հեսսենեան դքսուհի Բատէնբէրգեան իշխանուհի Վիկտորիա եւ նրա ամուսինը Բատտէնբէրգեան իշխան Լիւդվիգ։

Յուլիսի 28-ին Ալէքսանդրօ-Նեւսկի տաճարի գերեզմանատանը թաղվեց պետական կալուածների նախկին մինիստր աւագ-քարտուղար Օստրովսկու մարմինը։

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴ։ Այս գիշերվայ եւ առաւօտվայ ընթացքում երկու հրդեհներ Սորմովում ոչնչացրին աւելի քան 60 տուն։

ԼՕՆԴՕՆ։ Կիպչեներ հաղորդում է Պրետորիայից յուլիսի 27-ից, թէ Բրատֆօրդի մօտ գտնվող մի բլոկհաուզ, կատաղի կուից յետոյ, գրաւվեց անգլիացիներից յուլիսի 25-ի գիշերը՝ լոյս 26։ Անգլիացիների կորուստները—մի սպանված եւ երեք վիրաւորվածներ։

Կ. ՊՕԼԻՍ։ Այսօր տեղի ունեցաւ դեսպանական խորհրդակցութիւն այն յաճախ կրկնուող միջամտութիւնների մասին, որ թիւրքական տեղական իշխանութիւնները գործում են միջազգային սանիտարական խորհրդի որոշումների մէջ։

Աւագ-արարողապետ Իբրահիմ բէյ Բ. Դրան կողմից ներկայացրեց ֆրանսիական դեսպանին նոր առաջարկութիւններ Կ. Պոլսի ծովափերը յետ գնելու մասին։ Դեսպանը մերժեց առաջարկութիւնները, յայտնելով, թէ պնդում է վէճի լուծման վրա իր առաջարկած պայմաններով։

ՖԻԼԻՊՊՈՊՕԼ։ Կ. Պոլսից հաղորդում են, թէ այնտեղ ձերբակալված են շատ հայեր, որոնց մօտ գտնված են յեղափոխական գրքուածքներ։ Ասում են, թէ ձերբակալութիւնները կապ ունեն այն միջոցների հետ, որոնք ձեռք են առնված կարգը ապահովելու համար սուլթանի գահակալութեան առաջիկայ տարեդարձի ժամանակ։

29 յուլիսի

ԿՐՕՆՇԼԻՐԳ։ Կայսրուհի Վիկտորիայի մարմինը տեղափոխվեց եկեղեցի։ Դագաղի ետեւից կայսրը գնում էր միայնակ, մնացածները գնում էին փոքր ինչ հեռուից։ Երբ դագաղը դետեղվեց եկեղեցում, մտան կայսրը, ընտանիքի մնացած անդամները եւ պետական կանցլերը։ Հոգեհանգստից յետոյ կայսրը ծունկ չոքեց, միւսները նոյնպէս։ Կայսրը պսակ դրեց եւ այնուհետեւ վերադարձաւ Հօմբուրգ։

ՊԵԿԻՆ։ Դեսպանների շրջանում խօսում են, թէ վաղը դեսպանների ժողովում Անգլիայի ներկայացուցիչը առարկութիւններ կը բերէ մասնաժողով նշանակելու դէմ մաքսային տարիֆները քննելու համար։ Եթէ այս բանը տեղի կունենայ՝ բոլոր դեսպանները կը յայտնեն, թէ անկարելի է բարձրացնել արդէն վճռված հարցերը. բոլոր դեսպանները համաձայնվել են իրար մէջ մասնաժողով նշանակելու վերաբերմամբ։

ՍՕՖԻԱ։ Ռուսական նաւատորմը ալեկոծութեան պատճառով չը կարողացաւ երէկ դուրս գալ Վարնայից եւ դուրս եկաւ դէպի Բուրգաս յուլիսի 28-ին առաւօտեան։

ՆԷԱՊՕԼ։ Կրիսպի հոգեվարքի մէջ է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Հրատարակված են Բարձրագոյն հրամաններ 1) ինստիտուտների ուսուցիչներին իրաւունք տալու մասին, որ նրանք ձրիաբար իրանց աղջիկներին տեղաւորեն ուսանելու Կայսրուհի Մարիայի հիմնարկութիւնների թւում գտնվող ինստիտուտներում եւ գիմնազիաներում, 2) կօզակներին բանակային ուսուցման ժողովատեղիները կանչելու կարգը փոխելու մասին եւրոպական Ռուսաստանի եւ Կովկասի կօզակների զօրքերի մէջ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պօստերի եւ հռագրատների վարչութեան գլխաւոր կառավարիչ գեներալ-լէյտենանտ Պետրով, երկու ամսի արձակուրդ ստանալով, յանձնեց իր պաշտօնը իր օգնական իսկական քաղաքացիական խորհրդական Սեվաստեանովին։

Յուլիսի 28-ին տեղի ունեցաւ Բարձրագոյն ներկայութեամբ զօրահանդէս Ուստ-Իժօրեան բանակային ժողովատեղում։

Օգոստոսին Բարձրագոյն ներկայութեամբ տեղի կունենան մեծ, երկկողմեան զօրամարզութիւններ Վիբօրգ—Պետերբուրգ — Ռէվէլի շրջանում։ Նրանց կը մասնակցեն զօրքեր Կրասնօե-Սելօյի, Ուստ-Իժօրսկի եւ Ռէվէլի բանակներից, Պետերբուրգում եւ Կրոնշտատում գտնվող զօրքերը եւ ֆինլանդական զինուորական շրջանի զօրամասերը։

Թագաւոր Կայսրը Բարձրագոյն հրամայել բարեհաճեց՝ թնդանօթաձիգ զօրքերի մէջ դիվիզիօնների եւ բատարէաների հրամանատարների պաշտօնները չը համարել բաց այն դէպքերում, երբ այդ պաշտօնները յանձնվում են Կայսերական Ընտանիքի Անդամներին եւ Նորին Մեծութեան Ֆլիգէլ-ադիւտանտներին, ուստի եւ այդ պաշտօնների համար հետեւեալ աստիճանը չը տալ աւագութիւն ունեցող կապիտաններին, որոնք շտաբ-օֆիցէրական պաշտօններ չեն վարում, 2) շտաբ-օֆիցէրական աստիճան տալու ժամանակ պահպանել բոլոր տեսակ զօրքերի մէջ գոյութիւն ունեցող կանոնները, որ Կայսերական Ընտանիքի Անդամները եւ ֆլիգէլ-ադիւտանտները հետեւեալ աստիճան ստանան զօրքի մէջ ըստ աւագութեան իրանց հասակակիցների հետ, թէպէտ եւ նրանց համար չը լինեն շտաբ-օֆիցէրական բաց տեղեր եւ 3) Կայսերական Ընտանիքի Անդամները եւ ֆլիգէլ-ադիւտանտները օրեր-օֆիցէրական աստիճաններում հետեւեալ աստիճանը պիտի ստանան, համաձայն սահմանված օրէնքի, ծառայական լրացումից յետոյ. նրանց կապիտանի եւ բոտմիստրի աստիճաններ տալը պէտք է տեղի ունենայ որոշեալ ժամանակամիջոց ծառայելուց յետոյ, զօրքի մէջ նրանց աւագ հասակակիցների հետ, պարտաւորական չը համարելով սակայն նրանց համար, որ կապիտանի ազատ տեղ լինի։

ՊԵՆԶԱ։ Պենզան այրվում է մի անգամից երկու տեղում։ Նախընթաց երեկոյեան սատիկ փոթորկի ժամանակ այրվեցին 18 տներ։

ԽԱՐԿՕՎ։ Այստեղ հասաւ Մոսկվայի նահանգական դատարանի առանձնապէս կարեւոր գործերի քննիչ Իւշնեվսկի՝ նախնական քննութիւն կատարելու համար հողային եւ առեւտրական բանկերում տեղի ունեցած զեղծումների վերաբերմամբ։

Փոխադարձ վարկի երկրորդ ընկերութեան անդամների արտակարգ ընդհանուր ժողովում որոշվեց մտցնել լրացուցիչ վճար 12%-ի չափով երկու ժամանակամիջոցում, ընտրել նոր խորհուրդ, վարչութիւն եւ վերատուգող յանձնաժողով մի այլ արտակարգ ժողովում, որ նշանակված է օգոստոսի 11-ին։ Ընկերութեան կորուստները օնկօլի օպերացիաներում, որոնք կէս միլիօն բուրլուց աւելի են, ինչպէս յոյս ունեն, նշանաւոր չափով կը կրճատվեն գրաւ դրած թղթերի արժէքի բարձրանալով։ Մնացած բոլոր բաներում ընկերութեան գործերը գտնված են կատարեալ կարգ ու կանոնի մէջ։

յուլիսի 30-ին

ԿՐՕՆԲԷՐԳ։ Ժամի 4-ին կէսօրից յետոյ տեղի ունեցաւ հանգուցեալ Վիկտորիա կայսրուհու թաղման կարգի կատարումը։ Ամբոցից

սկսած մինչեւ եկեղեցին շարք շարք զօրքեր էին կանգնած։ Երգեցողութիւնից եւ աղօթքներից յետոյ պրինց—որդիները Ավգուստ-Վիլհելմ, Աղալբերտ եւ Օսկար տեղ դրաւեցին դագաղի ներքեւի կողմում, իսկ թագաժառանգը վերեւի կողմում։ Աւագ քարոզիչ Դրիանդէր աղօթք ասաց եւ ճառ արտասանեց հանգուցեալի մասին, իսկ յետոյ կատարեց թաղման ծէսը։ Զօրքերը եկեղեցու առաջ զինուորական պատիւ տուին. հնչեցին թմբուկի ձայները եւ փողերի շռինդը, ապա նորից տեղի ունեցան երգեցողութիւն, «Հայր Մեր»-ի ընթերցումն եւ օրհնութիւն։

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴ։ Ոստիկանութիւնը ձերբակալեց երկու անձանց՝ կասկածելով, թէ նրանք են սպանել Արկադի վարդապետին։

ՎԻԼՆԱ։ Երէկվայ նիստում, Վիլնայում քաղաքային ինքնավարութիւն մտցնելու քսանեւ հինգամեայ տարեդարձի օրվայ առիթով, քաղաքային խորհուրդը որոշեց՝ ի յիշատակ այս քսանհինգամեակի՝ դնել նիստի դահլիճում Կայսր Ալէքսանդր II-ի բրոնզեայ կիսարձանը, դնել հող եւ ընծայել ուսումնարանական վարչութեան բէալական դպրոցի համար նոր շինութիւն կառուցանելու եւ քաղաքի միջոցներով բանալ երեխաների հիւանդանոց 25 մահճակալով։

ԲՈՐԻՍՈԳԼԷԲՍԿ։ Քաղաքի մօտ, Ստանիշնայա գիւղում, երէկ կէս գիշերին հրդեհը ոչնչացրեց 14 տուն։ Հրդեհի ժամանակ այրվեց մի կին իր երիք փոքրահասակ երեխաներով։ Հայրը, իր փոքր երեխային ազատելու ժամանակ, այրուածքներ ստացաւ եւ այժմ գտնվում է հիւանդանոցում։ Այրվածների դիակները ցնցող տպաւորութիւն են գործում։

ԿԻԵՎ։ Դատաստանական քննիչի սենեակը բերված մի կալանաւոր յանկարծ վերցրեց սեղանի վրայից մի դանակ եւ իր կրծքին ու փորին մի քանի խոր վէրքեր հասցրեց։ Վէրքերը լուրջ են։ Կալանաւորը 20 տարեկան է։

ԿԻԼ։ Այսօր առաւօտեան ճանապարհ ընկաւ դէպի հարաւային բեւեռը գերմանական արշաւախումբը «Գաուսս» շոգենաւով։

ԳՕՄԲՈՒՐԳ։ Այստեղ հասան անգլիական թագաւորը, թագուհին, իշխանուհի Վիկտորիա եւ յունական արքայորդի Նիկոլայ իրանց շքախմբով. նրանց դիմաւորեցին պրինցները։ Կայարանում կանգնած էր պատուաւոր պահակախումբ 80-րորդ գնդից իր դրօշակով։

ՆԷԱՊՕԼ։ Կրիսպի վախճանվեց երեկոյեան 7³/₄ ժամին։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վենէրական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.

Կ. Մ. Զիկօվանցի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Կ. Ի. Գզելիեվ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.

Զ. Ի. Բաբանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.

Ա. Գ. Կարապետեանց—1—1¹/₂ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ն. Ն. Ռոստոմբէկով—6—7 ժ. վիրաբուժութեան և մորթու հ.

Ք. Ի. Գզելիեվ—7—8 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.

Բ. Ա. Նաւասարդեան—7¹/₂—8 ժ.

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Օ. Ս. Առվանիսեանի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ԴԱՍԱԳՐՔԵՐ ԿՐՕՆԻ

յատկապէս կազմած պետական միջնակարգ դպրոցների համար (աշխ. Ե. ա. ք. Երզնկեանի)

1) Առաջին գրքոյկ, պատրաստական դասարանների համար։ Գինն է 20 կոպ.։

2) Երկրորդ գրքոյկ, առաջին դասարանի համար։ Գինն է 30 կոպ.։

Վաճառվում են Թիֆլիսի Կենտրոնական գրավաճառանոցում։ (երք. չ.) 2—6

Մամուլի տակից դուրս եկաւ

(8-րդ տպագրութեամբ) իմ կազմած

ԴԱՍԱՏԵՏՐ ԿՐՕՆԻ

Ա. տարի

Հաւանութիւն գտած (одобрено) Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձութեան կողմից։

—

Մինչեւ յուլիսի վերջը մամուլի տակից դուրս կը գայ

«ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԻՆ ՈՒԽՏԻ»

Ցարմարեցրած պետական դպրոցների համար։

Սահակ. Ք. Սահակեանց

(Ե. հ. չ.) 2—5

ՌԺԶԿ. ՎԱՀԱՆ ՍՐԾՐՈՒՆՈՒ

աշխատութիւններից ձեռք բերելու համար՝ այսուհետեւ պէտք է դիմեն. Тифлисъ. Книжный магазинъ „Гуттенберъ“ (Лорисъ-Меликовская, № 11), Г. Галустяну. Նոյն տեղը վաճառվում են զանազան գրքեր։ Ամեն մի նոր լոյս տեսած գիրք ցանկացողներին կարող ենք ուղարկել։

ԴՊՐՈՑ

ԿԱՏ. ԼԻՍԻՑԵԱՆԻ

երկու սեռի մանուկների համար։ Ընդունվում են երեխաներ պատրաստականի բոլոր բաժանմունքները եւ նոր բացվելիք առաջին (աղջիկների համար երկրորդ) դասարանը։ Աշակերտների թիւը սահմանափակված է։ Դիմել օգոստոսի 26-ից։ Բեհբութեան (Նովո-Սադովայա) փող., սեփ. տ. № 29։ 3—20

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլատրութեամբ։ Մեծ արկղիկը 5 ռուբլի, փոքրը—3 ր. եւ 1 ր. 50 կ.։

ՖԻՖԼԻՍԻՆ

ՆՈՐ ՄԻՋՈՑ

մազերը բուսցնելու եւ ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաեւ բոլորովին նոր միջոց

ԶՈՒԻ ԿԱԹԸ

երեսին քնքշութիւն եւ սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արեւի պատճառած սեւութիւնը, մուները, տալիս է կարմրին քնքշութիւն եւ սպիտակութիւն։ Այդ դները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 ռուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական եւ դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Գուշչինսկայա փողոց տ. № 15, ընակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երեւանեան հրապարակ եւ նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց եւ Բագուում. նաեւ Միքայէլեան կամուրջի վրա, Պապովի եւ Արիստակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են ան ֆրանկ՝ պօստով։ 52—100

ԳՈՒՏՏԷՆԲԷՐԳ

գրախանութում վաճառվում է

«Էվէլինա», Գրիգոր Արծրունու, գինը—50 կ.
Նոյնը ռուսերէն, թարգ. Դատակեանի—70 կ.
«Թիւրքաց հայերի մտաւորական դրութիւնը, Գրիգոր Արծրունու, գինն է 20 կ.
Նոյնը ռուսերէն, թարգմ. Հ. Առաքելեանի 25 կ.

Դիմել՝ Книжный магазинъ Гуттенбергъ, Лорисъ-Меликовская, № 11, Г. Галустяну. 5—10

ՀՐԱՒԻՐՎՈՒՄ Է ՎԱՐԺՈՒՀԻ

Մանկական պարտէզի համար Թաւրիզի Ատրպատականի Հայուհեաց Բարեգործական ընկերութեան վարչութիւնը 600 ռուբլի ռոճիկով։ Դիմել բժշկապետ Բ. Նաւասարդեանին, ժամի 11—12-ը։ 5—5

ՄԱՅՐԵՆԻ ԽՕՍՔ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ՁԵՌՆԱՐԿ

կրտսեր դասարանների համար
համառօտ բառգրքով
Կազմեցին
Կ. ԿՈՒՍԻԿԵԱՆ եւ Լ. ՍԱՐԳՍԵԱՆ
Գինն է 70 կոպ.

Դիմել՝ Թիֆլիս, Կենտրօնական եւ Գուտենբերգ գրավաճառանոցները։ 1—5

Բ Ժ Ի Շ Կ

ԳԱՐԵԳԻՆ ՍԱՐԳՍԵԱՆՑ

ԲԱԳԻՈՒՄ

ՏԵՂԱՓՈԽՎԵԼ Է

Колюбякинская улица, домъ Гумилевской, № 33.

(Դ. Բօստանճեանցի կենտրօնական լուսանկարչատան դիմաց)

Հիւանդների ընդունելութիւնը

Առաւօտեան 8—10 ժ.

Երեկոյեան 5—8 ժ.

Երեխաների, ներքին հիւանդութիւն եւ սիֆիլիս։ 3—7

ՄԻ ՕՐԻՈՐԴ

որ իր նախկին կրթութիւնը ստացել է Պետերբուրգում, աւարտել է կար ու ձեւի եւ խոհարարական ուսումնարանները եւ երկար տարիներ վարել է ուսուցչուհութեան պաշտօն, այժմ կամենում է վարել նոյն պաշտօնը Թիֆլիսում. համաձայն է գնալ եւ ուրիշ քաղաքներ։

Դիմել՝ Тифлисъ, Городская Управа, Василію Заварову. 1—3

Կ. Մ. ԿԷՕՆՃԵԱՆ

Ընդունում է բերանի եւ ատամների հիւանդութիւններ ունեցողներին։ Շինում է արուեստական ատամներ, քիթ, քիմք (обтураторъ) եւ վերին ու ստորին անդամահատված ծնօտների պրօթեզներ (резекціонные протезы).

Առաւօտեան 8—2 ժամ.
Երեկոյեան 5—8 »

Հասցէն՝ Պուշկինսկայա փողոց, № 16։ 10—25

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ ԴՈՒՐՍ ԵԿԱՆ

1) «ՎՏԱԿ» հանդէսը, որ արժէ Թիֆլիսում 1 ր. 50 կ., քաղաքից դուրս 2 ր.։ Ցատկապէս այս հանդէսի համար պատրաստվում են չքեղ եւ հաճեստ կազմեր 40 կ., 50 կ., 75 կ. եւ 1 ր.։ 2) Վրթանէս Փափազեանի «ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ» գրքոյկը, որ Թիֆլիսում արժէ 50 կ., քաղաքից դուրս 65 կ.։—Ցիշեալ երկու գիրքը ի վաճառ կը հանվեն գրաքննիչից իրաւունք ստանալուց յետոյ, մօտաւորապէս յուլիսի վերջին։ 3) Աշըղ Զիւանիի «Քեռարաժ եւ Ասլիի» հէքիաթը, գ. 60 կ., քաղաքից դուրս 80 կ.։ Գումարով գնողներին զիջումն կը լինի։ «Վտակի» համար բաժանորդագրութիւնը Կենտրօնական գրավաճառանոցում շարունակվում է։

Դիմել՝ Тифлисъ. Центральная Книжная Торговля. 9—10

Ի. ԵԱ. ԲՐՕՆ-ՖՕՆ-ԲՐԷՆՆԷՐԻ

ՀԱՇԻԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻՑ

Նիկոլաեվսկայա, № 88.

Խնդիրքների ընդունելութիւնն սկսված է։ Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 10-ին։ Դասընթացքը բաժանված է կիսամեակների։ Պարապմունքները տեղի են ունենում ճաշից յետոյ։ Վճարը ամբողջ դասընթացքի համար 60 ռուբլի։ Ընդունվում են երկու սեռի անձինք։

ԱՌԱՐԿԱՆԵՐԸ ԵՒ ԴԱՍԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ.

1) Հաշուապահութիւն
2) Բանկային գործ
3) Առեւտրական թուաբանութիւն
4) Թուաբանութիւն հաշուեցոյցով։
} Ի. Եա. Բրօն-ֆօն-Բրէննէր, դասարանների հիմնադիրը.

5) Տեխնօլոգիա
6) Ապրանքագիտութիւն
7) Թղթակցութիւն.
} Մ. Ի. Զէնդէրի, լեռնային ինժենէր, պետական խորհրդական.

8) Առեւտրական օրէնքներ
9) Առեւտուր
} Վ. Ս. Մօսկալեօվ, պրօկուրօրի օգնական, թ. ն. դ.

10) Գեղագրութիւն—Գ. Եա. Դիւկօվ, ինժենէր-երկրաչափ.

ՈՉ-ՊԱՐԱՏԴԻՐ ԱՌԱՐԿԱՆԵՐ

1) Ֆրանսիական լեզու—Է. Կ. Լիօզէկ, դաս. 2-դ կլասիկ. գիմնազիայի.
2) Գերմանական լեզու—Ի. Ֆ. Գրուվլիկ, դաս. Թիֆլ. բէալական ուսումնարանի.
3) Սղագրութիւն, Ի. Եա. Բրօն-ֆօն-Բրէննէր.
4) Ուսուցումն գրելու գրող մեքենայով, նաեւ կողմնակի անձանց համար։

Մինչեւ օգոստոսի 10-ը խնդիրքները ընդունվում են դասարանների հիմնադրի մօտ՝ նրա բնակարանում, Միխայլովսկի պրոսպեկտ, № 71, իսկ յետոյ դասարանների դիւանատունը, Նիկոլաեվսկայա, № 88. 10—20

Սարգիս Վ. Աբրահամեան

Адр. Сололаки, уголъ Гановской и Садовой, д. Маркарова, № 27 и 31.

Սովորեցնում եւ պատրաստում է երկու սեռի անձանց չորս ամսվայ ընթացքում, երաշխաւորութեամբ եւ հարկաւոր դէպքում—յանձնարարականներ տալով պարապմունքներ գտնելու համար

ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԻՒՆ

1) Կրկնակի իտալական հաշուապահութիւն իր բոլոր ճիւղերով. գիւղատնտեսական, նաւթարդիւնաբերական, գործարանական, առեւտրական, բանկային եւ շոգենաւային հաշուապահութիւն։
2) Առեւտրական թուաբանութիւն.
3) Առեւտրական թղթակցութիւն։
4) Պարտաւորեալի օրէնքները։
5) Գեղագրութիւն, ուսումնասիրութիւն զանազանատեսակ շրիֆտների եւ ուղղումն ամենավատ ձեռքերի։

Հասցէն՝ ՍՕԼՕԼԱԿ, Գանօվսկայա եւ Սադօվայա փողոցների անկիւն, տուն Մարգարեանի №№ 27 եւ 31։

Կարելի է տեսնել առաւօտեան ժամի 9-ից մինչեւ 11-ը եւ 4-ից մինչեւ 7-ը երեկոյեան։ 3—25

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Թիֆլիս, Լերմօնտովսկայա փողոց, № 9)

Ցանկացողները ունենալ իրանց առեւտրական գործերի համար ուսման ընթացքը աւարտած աշակերտներ եւ աշակերտուհիներ, թող բարեհաճեն դիմել կուրսերի հիմնողին, Ս. Մանուէլեանցին։ Աւարտողները ստացել են ժամանակագիտական առեւտրական կրթութիւն, Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի հաստատված ծրագրի համեմատ, եւ ունեն օրինաւոր ատեստատներ։

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍԿՍՎԵԼՈՒ ԵՆ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-Ի

Կուրսերի ծրագիրը եւ կանոնները կարելի է ստանալ ձրիապէս եղը. Ծովիանօվների բանկային գրասենեակում եւ կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիները դիմում են՝ ТИФЛИСЪ, учредителю коммерческихъ курсовъ С. П. Мануэльянцу. (Ե.) 7—12

Дозволено цензурою, Тифлисъ, 30 Іюля 1901 г.

Электропечатня Грузин. Изд. Т—ва, Б.-Ванкская ул.